Կարգապահական գործ թիվ ԿԳ-22010

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022 թվականի օգոստոսի 23-ի թիվ 30-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/17-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ ԵՐՎԱՆԴԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Գայանե Դեմիրչյանի, Խորհրդի անդամներ՝, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի, Մարինե Ֆարմանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Մանուշակ Երվանդի Հակոբյանի (արտոնագիր՝ թիվ 737) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արա Ջորջ Ժորժի Քեթիբյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ փաստաբան Մանուշակ Հակոբյանի հետ 11.06.2021 թվականին կնքել է պայմանագիր՝ իրեն պատկանող անշարժ գույքի սեփականության իրավունքի իրականացման և շինարարության իրականացման խոչընդոտները վերացնելու հետ կապված անհրաժեշտ իրավաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ: Դիմողը նշել է, որ ինքը 12.06.2021 թվականին փոխանցել է 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ փաստաբանի տրամադրած հաշվեհամարին: Այնուհետև 28.07.2021 թվականին կնքել է երկրորդ պայմանագիրը՝ սեփականության իրավունքով Ա.Քեթիբյանին պատկանող հողամասերում բազմաբնակարան շենքեր կառուցելու, շինարարության թույլտվության և ջրագծերի անցկացման հետ կապված բոլոր անհրաժեշտ իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ:

Նշված պայմանագրի հիման վրա Դիմողը փոխանցել է 6.000.000 (վեց միլիոն) ՀՀ դրամ փաստաբանի տրամադրած հաշվեհամարին:

Դիմողը նշել է, որ որոշ ժամանակ անց ինքը փաստաբանին խնդրել է տրամադրել տեղեկություններ՝ կատարված աշխատանքների վերաբերյալ, սակայն որևէ աշխատանք չի կատարվել, և որևէ արդյունք չի եղել:

Դիմողը հայտնել է, որ դժվարությամբ կարողացել է կապ հաստատել

փաստաբանի հետ՝ հրաժարվելով, որ իր գործով այսուհետ զբաղվի և խնդրելով չեղյալ ճանաչել իր կողմից տրված լիազորագիրը, պայմանագրերը խզել, որ իրեն ներկայացնի իր գործին առնչվող բոլոր փաստաթղթերը, հաշվարկ կատարի կատարված աշխատանքների ծախսերի վերաբերյալ, հանձնի իրեն բոլոր փաստաթղթերը և վերադարձնի չկատարած աշխատանքների գումարը:

Այնուհետև նա դիմել է մեկ այլ փաստաբանի և խնդրել գրավոր դիմում ներկայացնել: Փաստաբանը գրավոր դիմում է ներկայացրել 23.02.2021 թվականին հավաստագրով, որը ստացել է 02.03.2022 թվականին, սակայն որևէ արձագանք չի եղել:

Վերոգրյալի հիման վրա Դիմողը խնդրել է փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 13.04.2022թ. թիվ 71-Ա/ԿԳ-22010 որոշմամբ փաստաբան Մանուշակ Երվանդի Հակոբյանի նկատմամբ հարուցվել է **կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև** Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 2.7.2, 3.5.5 և 3.6.1 **ենթակետերի խախտման հատկանիշներով:**

15.04.2022թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Վերոնիկա Ալեքսանյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացել է և հայտնել, որ փաստաբան Մանուշակ Հակոբյանն իր պայմանագրային պարտավորությունները չի կատարել, մասնավորապես՝ իրեն տեղեկատվություն՝ հաշվետվություն չի ներկայացրել 6.000.000 ՀՀ դրամ գումարի դիմաց կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ինչպես նաև հայտնել է, որ փաստաբանն իրեն չի վերադարձրել սույն գործին առնչվող փաստաթղթերի բնօրինակները:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել կարգապահական նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբանը Պալատին 08.04.2022 թվականին ներկայացված բացատրությամբ ներկայացրել է մանրամասներ Արա Քեթիբյանի վերաբերյալ գործից, թվարկել է իր կողմից կատարված աշխատանքները և հայտնել, որ իր ծառայություններն ավարտելուց հետո իր համար անսպասելի, առանց

պատճառաբանության, Քեթիբյանի նոր փաստաբանի կողմից 02.03.2022 թվականին ստացել է գրություն այն մասին, որ հրաժարվում է իր ծառայություններից, ունի այլ փաստաբան:

Գործի նախապատրաստման ընթացքում 23.05.2022 թվականին փաստաբան Մանուշակ Հակոբյանը ներկայացվել է լրացուցիչ բացատրություն, որով մասնավորապես հայտնել է, որ. «Արա Քեթիբյանի հետ 11.06.2021թ.-ին կնքված առաջին պայմանագրի առարկայի համաձայն պարտավորվել եմ ուսումնասիրել փաստաթերը, կատարել հարցումներ, կազմել գրություններ, իրականացնել իրավաբանական խորհրդատվություն և Քեթիբյանին պատկանող թիվ 19052021-01-0133, 13052021-01-0159 և 13052021-01-0226 սեփականության վկայականներով անշարժ գույքերի՝ հողամասերի սեփականության իրավունքի իրականացման և շինարարության իրականացման խոչընդոտները վերացնելու հետ կապված անհրաժեշտ իրավաբանական ծառայությունների մատուցում:

Քանի որ Քեթիբյանի կողմից ներկայացված փաստաթղթերը բավարար չէին ամբողջական պատկերացում կազմելու ստեղծված իրավիճակի վերաբերյալ, իմ կողմից կատարվել է մի քանի հարցումներ Կադաստրի կոմիտե, Քեթիբյանին պատկանող հողամասերի և հարևան հողամասերի կադաստրային գործերում առկա փաստաթղթերի պատճենները ստանալու համար:

- Կազմել եմ հարցում և ստացել հատված Երևան քաղաքի գործող կադաստրային քարտեզից Քեթիբյանի հողամասերի վերաբերյալ:
- Կազմել եմ բազմաթիվ գրություններ և բողոքներ ՀՀ Ոստիկանության և կենտրոնի բաժնի Նորք-Մարաշ բաժանմունքի պետին հասցեագրված, հարևանների կողմից Քեթիբյանին պատկանող հողամասերի նկատմամբ ներխուժումը կանխելու և հողամասերի վրա կառուցված ինքնակամ շինությունները քանդել պարտավորեցնելու խնդրանքով:

Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքում Քեթիբյանը հայտնել է, որ փոխել է իր մտադրությունը և ցանկանում է կառուցել ոչ թե բնակելի տուն, այլ բազմաբնակարան շենքեր: Ելնելով իրադրության փոփոխությունից, փոխադարձ համաձայնությամբ 28.07.2021թ.-ին կնքվել է ևս մեկ իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր:

Արա Քեթիբյանի հետ կնքված երկրորդ իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի առարկայի համաձայն պարտավորվել եմ ուսումնասիրել փաստաթղթերը, կատարել հարցումներ, կազմել գրություններ, իրականացնել իրավաբանական խորհրդատվություն, կատարել վճարումներ և Քեթիբյանին պատկանող թիվ 19052021-01-0133, 13052021-01-0159 և 13052021-01-0226 սեփականության վկայականներով անշարժ գույքերի՝ հողամասերում բազմաբնակարան շենքեր կառուցելու շինարարության թույլտվության և ջրագծերի անցկացման հետ կապված անհրաժեշտ իրավաբանական ծառայությունների մատուցում:

Ներկա պահին մեր միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերով իմ ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կատարված են»:

<u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

13.06.2022թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Վերոնիկա Ալեքսանյանը կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերը առարկություն չեն ներկայացրել:

15.06.2022թ. կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 23.08.2022թ ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Փաստաբան Մանուշակ Հակոբյանի՝ մի կողմից, և Արա Ջորջ Ժորժի Քեթիբյանի՝ մյուս կողմից 11.06.2021թ. կնքվել է փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագիր **(այսուհետ՝ Պայմանագիր 1)**: *Սույն փաստը հաստատվում է կողմերի ներկայացրած պայմանագրի պատճենով:*

2. Պայմանագիր 1-ի 1.1. ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավորվում է մատուցել փաստաբանական ծառայություն՝ նույն պայմանագրով սահմանված ծավալով և կարգով: Նույն պայմանագրի 1.2. ենթակետի համաձայն սահմանվել է փաստաբանական աշխատանքի ծավալը. փաստաթղթերի ուսումնասիրություն, իրավաբանական խորհրդատվություն, հարցումների և գրությունների կազմում, թիվ 19052021-01-0133, 13052021-01-0159 և 13052021-01-0226 սեփականության վկայականներով սեփականության իրավունքով Արա Ջորջ Ժորժի Քեթիբյանին պատկանող անշարժ գույքի սեփականության իրավունքի իրականացման և շինարարության իրականացման խոչընդոտները վերացնելու հետ կապված բոլոր անհրաժեշտ իրավաբանական ծառայությունների մատուցում:

3. Փաստաբան Մանուշակ Հակոբյանի՝ մի կողմից, և Արա Ջորջ Ժորժի

Քեթիբյանի՝ մյուս կողմից 28.07.2021թ. կնքվել է փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ մեկ այլ պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր 2):*Սույն փաստը հաստատվում է կողմերի ներկայացրած պայմանագրի պատճենով:*

4. Պայմանագիր 2-ի 1.1. ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավորվում է մատուցել փաստաբանական ծառայություն՝ նույն պայմանագրով սահմանված ծավալով և կարգով: Նույն պայմանագրի 1.2. ենթակետի համաձայն սահմանվել է փաստաբանական աշխատանքի ծավալը. փաստաթղթերի ուսումնասիրություն, իրավաբանական խորհրդատվություն, հարցումների և գրությունների կազմում, դիմումների հանձնում և ընթացքի հետևում, պայմանագրերի նախագծերի կազմում և մասնակցություն կնքման գործընթացին, պետական և ոչ պետական մարմիններում ներկայացուցչության իրականացում, անհրաժեշտ բոլոր տեսակի վճարների կատարում, թիվ 19052021-01-0133, 13052021-01-0159 և 13052021-01-0226 սեփականության վկայականներով սեփականության իրավունքով Արա Ջորջ Ժորժի Քեթիբյանին պատկանող հողամասերում բազմաբնակարան շենքեր կառուցելու շինարարության թույլտվության և ջրագծերի անցկացման հետ կապված բոլոր անհրաժեշտ իրավաբանական ծառայությունների մատուցում:

5. Արա Ջորջ Ժորժի Քեթիբյանի կողմից «ՎԻՊ ԼԱՎ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՔ» ՍՊԸ-ի հաշվին 12.06.2021 թվականին և 02.08.2021 թվականին փոխանցվել է համապատասխանաբար 3.000.000 (երեք միլիոն) և 6.000.000 (վեց միլիոն) ՀՀ դրամ գումար: *Սույն փաստը հաստատվում է վճարման անդորրագրերի պատճեներով:*

6. 12.08.2021 թվականին Փաստաբանը դիմում է հասցեագրել Երևանի քաղաքապետարան Արա Ջորջ Քեթիբյանին սեփականության իրավունքով պատկանող, Նորքի 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի հհ.21/2, 23/2 և Նորքի 8-րդ փողոցի հ.19 հասցեներում գտնվող բնակելի տների /վկ. հ.13052021-01-0159, վկ. հ.19052021-01-0133 և վկ. հ.13052021-01-0226/ զբաղեցրած հողամասերին ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Նորքի 8-րդ փողոց, հ.19: *Սույն փաստը հաստատվում է Երևանի քաղաքապետարանի կողմից Փաստաբան Մանուշակ Հակոբյանին հասցեագրված դիմումի պատասխանի պատճենով:*

7. Փաստաբանը դիմումներ է հասցեագրել ՀՀ վարչապետին, ՀՀ ոստիկանությանը և Երևանի քաղաքապետին՝ Արա Ջորջ Քեթիբյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Նորք-Մարաշ վարչական շրջան, Նորքի 8-րդ փողոց 19 հասցեում գտնվող հողամասում հարևանների կողմից ներխուժումը կանխելու և կառուցված ինքնակամ շինությունների քանդելը պարտավորեցնելու խնդրանքով: *Սույն փաստը հաստատվում է դիմումների պատճեներով, ինչպես նաև համապատասխան դիմումների պատասխանների պատճեներով:*

8. 30.08.2021թ. Պարտավորագրի համաձայն՝ Գրիգոր Անդրեասյանը հավաստում է, որ Մանուշակ Հակոբյանից ստացել է հինգը հարյուր ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և պարտավորվում է չխոչընդոտել Ա. Քեթիբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի պարսպապատի կառուցմանը և իր միջոցներով վերացնել ցանկացած խոչընդոտ: *Սույն փաստը հաստատվում է 30.08.2021 թվականին՝ Գրիգոր Անդրեասյանի և Արա Ջորջ Քեթիբյանի փաստաբան Մանուշակ Հակոբյանի միջև կնքված պարտավորագրի պատճենով:*

9. 11.09.2021թ. Պարտավորագրի համաձայն՝ Թոռնիկ Բաբայանը հավաստում է, որ Մանուշակ Հակոբյանից ստացել է 245.000 ՀՀ դրամ և

պարտավորվում է չխոչընդոտել Ա. Քեթիբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի պարսպապատի կառուցմանը և իր միջոցներով վերացնել ցանկացած խոչընդոտ: *Սույն փաստը հաստատվում է 11.09.2021 թվականին Թոռնիկ Բաբայանի և Արա Ջորջ Քեթիբյանի փաստաբան Մանուշակ Հակոբյանի միջև կնքված պարտավորագրի պատճենով:*

10. 03.06.2021 թվականին ՀՀ Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի կողմից կառուցապատող Արա Ջորջ Քեթիբյանին տրվել է շինարարության թույլտվություն: *Սույն փաստը հաստատվում է ՀՀ Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության պատճենով:*

11. 03.09.2021 թվականին Մանուշակ Հակոբյանը Միքայել Հակոբյան Լևոնի ԱՁ հաշվեհամարին վճարվել է երեսուն հազար ՀՀ դրամ գումար՝ Նորքի 8-րդ փ. 19 չափագրման աշխատանքներ կատարելու համար: *Սույն փաստը հաստատվում է վճարման անդորրագրի պատճենով:*

12. 14.10.2021 թվականին ՀՀ Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարվի կողմից կառոցապատող Արա Ջորջ Քեթիբյանին տրվել է Նորք-Մարաշ վարչական շրջան, Նորքի 8-րդ փողոց 19 հասցեի նախագծման թույլտվություն (ճարտարապետական առաջադրանք): *Սույն փաստը հաստատվում է ՀՀ Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի կողմից տրված նախագծման թույլտվության պատճենով:*

13. Գործում առկա է պայմանագրերի նախագծեր: *Սույն փաստը հաստատվում է պայմանագրերի նախագծերով:*

14. 01.03.2022 թվականին Երևան համայնքի կողմից կառուցապատող Արա Ջորջ Քեթիբյանին տրվել է Նորք-Մարաշ վարչական շրջանի, Նորքի 8-րդ փողոցի 19 հասցեի ցանկապատի շինարարական աշխատանքների ավարտական ակտը: *Սույն փաստը հաստատվում է Երևանի քաղաքապետի կողմից տրամադրված ավարտական ակտի պատճենով:*

15. 21.01.2022 թվականին Արա Ջորջ Քեթիբյանի անունից Մանուշակ Հակոբյանը «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՊԲԸ-ի հաշվեհամարին վճարվել է 25 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ գումար՝ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվություն ձևակերպման համար: *Սույն փաստը հաստատվում է վճարման անդորրագրի պատճենով:*

16. 21.01.2022 թվականին Արա Ջորջ Քեթիբյանի անունից Մանուշակ Հակոբյանը «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՊԲԸ-ի հաշվեհամարին վճարվել է 50 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումար՝ ավարտական ակտի ձևակերպման համար: *Սույն փաստը հաստատվում է վճարման անդորրագրի պատճենով:*

17. Պատվիրատուի առաջադրանքով Նորք-Մարաշ վարչական շրջանի, Նորքի 8-րդ փողոցի 19 հասցեի համար կազմել է՝ բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման էսքիզային նախագիծ: *Սույն փաստը հաստատվում է էսքիզային նախագծի պատճենով:*

18. 11.11.2021 թվականին Արա Ջորջ Քեթիբյանի անունից Մանուշակ Հակոբյանը դիմել է «Գազպրոմ Արմենիա» ընկերությանը Նորք-Մարաշ վարչական շրջանի, Նորքի 8-րդ փողոցի 19 հասցեի գազիֆիկացման և գազամատակարարման

համար: *Սույն փաստը հաստատվում է 05.11.2021 թվականին ներկայացված դիմումին ի պատասխան գրության պատճենով:*

19. 15.11.2021 թվականի «Գազպրոմ Արմենիա» ընկերության կողմից թույլատրվել է Նորք-Մարաշ վարչական շրջանի, Նորքի 8-րդ փողոցի 19 հասցեի սեփականատիրոջ կողմից կառուցվող բազմաբնակարան շենքի գազաֆիկացման աշխատանքների իրականացում: *Սույն փաստը հաստատվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալի գրության պատճենով:*

20. Փաստաբանը դիմել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին բաժանորդ դառնալու համար: *Սույն փաստը հաստատվում է 19.11.2021 թվականին «ՎԵՈԼԱ ՋՈՒՐ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Մ. Շահինյանի գրության պատճենով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված 20.06.2022թ. տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Մանուշակ Հակոբյանը (արտոնագիր թիվ՝ 737) փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 19.10.2007թ., և 2019-2022թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ Մանուշակ Հակոբյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«**Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝** Փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝ ա. նյութերի ուսումնասիրությունը, բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը, գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը, դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նշված կանոններով վստահորդի շահերի և իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու նպատակով փաստաբանի համար սահմանվում են որոշակի առանձնահատուկ պարտականություններ, որոնք կապված են

փաստաբանի մասնագիտական կարողությունների և հմտությունների ու դրանցից բխող պատշաճ գործողությունների կատարման հետ:

Վերոգրյալը հաշվի առնելով Խորհուրդն անհրաժեշտ է համարում պարզել, թե՝

- **արդյոք փաստաբան Մանուշակ Հակոբյանը կատարել է պայմանագրերով ստանձնած իր պարտականությունները արագ և արդյունավետ.**
- **արդյոք փաստաբան Մանուշակ Հակոբյանը տրամադրել է դիմողին բարեխիղճ և որակյալ իրավական օգնություն՝ ելնելով Դիմողի նպաստավոր շահերի և իր հանձնառություններից:**

Սույն գործով հաստատված է այն փաստը, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունն և վերջինիս հետ կնքել է երկու պայմանագիր, որին Խորհուրդը կանդրադառնա ստորև առանձին-առանձին:

Պայմանագիր 1-ի 1.2. ենթակետի համաձայն սահմանվել է փաստաբանական աշխատանքի ծավալը. փաստաթղթերի ուսումնասիրություն, իրավաբանական խորհրդատվություն, հարցումների և գրությունների կազմում, թիվ 19052021-01-0133, 13052021-01-0159 և 13052021-01-0226 սեփականության վկայականներով սեփականության իրավունքով Արա Ջորջ Ժորժի Քեթիբյանին պատկանող անշարժ գույքի սեփականության իրավունքի իրականացման և շինարարության իրականացման խոչընդոտները վերացնելու հետ կապված բոլոր անհրաժեշտ իրավաբանական ծառայությունների մատուցում:

Ներկայացված ապացույցների շրջանակներում Խորհուրդը փաստում է, որ Փաստաբանը Պայմանագի 1-ով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար իրականացրել է անհրաժեշտ մասնագիտական գործողություններ, մասնավորապես՝ 12.08.2021 թվականին Փաստաբանը դիմում է հասցեագրել Երևանի քաղաքապետարան Արա Ջորջ Քեթիբյանին սեփականության իրավունքով պատկանող, Նորքի 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի հհ.21/2, 23/2 և Նորքի 8-րդ փողոցի հ.19 հասցեներում գտնվող բնակելի տների /վկ. հ.13052021-01-0159, վկ. հ.19052021-01-0133 և վկ. հ.13052021-01-0226/ զբաղեցրած հողամասերին ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Նորքի 8-րդ փողոց, հ.19, Փաստաբանը դիմումներ է հասցեագրել ՀՀ վարչապետին, ՀՀ ոստիկանությանը և Երևանի քաղաքապետին՝ Արա Ջորջ Քեթիբյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Նորք-Մարաշ վարչական շրջան, Նորքի 8-րդ փողոց 19 հասցեում գտնվող հողամասում հարևանների կողմից ներխուժումը կանխելու և կառուցված ինքնակամ շինությունների քանդելը պարտավորեցնելու խնդրանքով, 30.08.2021թ. պարտավորագրի համաձայն՝ Գրիգոր Անդրեասյանը հավաստում է, որ Մանուշակ Հակոբյանից ստացել է հինգը հարյուր ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և պարտավորվում է չխոչընդոտել Ա. Քեթիբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի պարսպապատի կառուցմանը և իր միջոցներով վերացնել ցանկացած խոչընդոտ, 11.09.2021թ. պարտավորագրի համաձայն՝ Թոռնիկ Բաբայանը հավաստում է, որ Մանուշակ Հակոբյանից ստացել է 245.000 ՀՀ դրամ և պարտավորվում է չխոչընդոտել Ա. Քեթիբյանին սեփականության

իրավունքով պատկանող հողամասի պարսպապատի կառուցմանը և իր միջոցներով վերացնել ցանկացած խոչընդոտ, ՎԴ/8533/05/21 վարչական գործից հետևում է, որ Դիմողի հարևաններից Աշոտ վանյանը միջնորդություն է ներկայացրել Դատարան հայցի ապահովման միջոց կիրառելու մասին խնդրելով՝ արգելելով Երևան համայնքին ք. Երևան, Նորք Մարաշ 8-րդ փողոցի վերջնամասում գտնվող ինքնակամ կառուցված շինության քանդմանն ուղղված որևէ գործողություն կատարել՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, որը Դատարանի կողմից մերժվել է, 01.03.2022 թվականին Երևան համայնքի կողմից կառուցապատող Արա Ջորջ Քեթիբյանին տրվել է Նորք-Մարաշ վարչական շրջանի, Նորքի 8-րդ փողոցի 19 հասցեի ցանկապատի շինարարական աշխատանքների ավարտական ակտը:

Այսպիսով, գնահատելով Դիմողի հանձնարարության շրջանակներում Փաստաբանի կողմից կատարված գործողությունները, Խորհուրդը փաստում, որ Դիմողի պնդումները չեն հիմնավորվում, մինչդեռ գնահատված ապացույցների շրջանակներում հիմնավորվում է Պայմանագրի 1-ի առարկայի շրջանակներում Փաստաբանի կողմից ստանձնած հանձնարարության կատարման հանգամանքը:

Պայմանագիր 2-ի 1.1. ենթակետի համաձայն սահմանվել է փաստաբանական աշխատանքի ծավալը, այն է՝ փաստաթղթերի ուսումնասիրություն, իրավաբանական խորհրդատվություն, հարցումների և գրությունների կազմում, դիմումների հանձնում և ընթացքի հետևում, պայմանագրերի նախագծերի կազմում և մասնակցություն կնքման գործընթացին, պետական և ոչ պետական մարմիններում ներկայացուցչության իրականացում, անհրաժեշտ բոլոր տեսակի վճարների կատարում, թիվ 19052021-01-0133, 13052021-01-0159 և 13052021-01-0226 սեփականության վկայականներով սեփականության իրավունքով Արա Ջորջ Ժորժի Քեթիբյանին պատկանող հողամասերում բազմաբնակարան շենքեր կառուցելու շինարարության թույլտվության և ջրագծերի անցկացման հետ կապված բոլոր անհրաժեշտ իրավաբանական ծառայությունների մատուցում:

Ներկայացված ապացույցների շրջանակներում Խորհուրդը փաստում է, որ Փաստաբանը Պայմանագի 2-ով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար նույնպես իրականացրել է անհրաժեշտ մասնագիտական գործողություններ, մասնավորապես՝ Փաստաբանը դիմել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին բաժանորդ դառնալու համար, 11.11.2021 թվականիո Արա Ջորջ Քեթիբյանի անունից Մանուշակ Հակոբյանը դիմել է «Գազպրոմ Արմենիա» ընկերությանը Նորք-Մարաշ վարչական շրջանի, Նորքի 8-րդ փողոցի 19 հասցեի գազիֆիկացման և գազամատակարարման համար, 15.11.2021 թվականի «Գազպրոմ Արմենիա» ընկերության կողմից թույլատրվել է Նորք-Մարաշ վարչական շրջանի, Նորքի 8-րդ փողոցի 19 հասցեի սեփականատիրոջ կողմից կառուցվող բազմաբնակարան շենքի գազաֆիկացման աշխատանքների իրականացում, Փաստաբանի կողմից կազմվել է մի շարք պայմանագրերի նախագծեր, 21.01.2022 թվականին Արա Ջորջ Քեթիբյանի անունից Մանուշակ Հակոբյանը «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՊԲԸ-ի հաշվեհամարին վճարվել է 25 (քսանհինգ հազար) և 50 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումար, պատվիրատուի առաջադրանքով Նորք-Մարաշ վարչական շրջանի, Նորքի 8-րդ փողոցի 19 հասցեի

համար կազմել է՝ բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման էսքիզային նախագիծ:

Այսպիսով, գնահատելով Դիմողի հանձնարարության շրջանակներում Փաստաբանի կողմից կատարված գործողությունները, Խորհուրդը փաստում, որ Դիմողի պնդումները չեն հիմնավորվում, մինչդեռ գնահատված ապացույցների շրջանակներում հիմնավորվում է Պայմանագրի 2-ի առարկայի շրջանակներում Փաստաբանի կողմից ստանձնած հանձնարարությունը ըստ էության կատարված լինելու հանգամանքը:

Նման պայմաններում Խորհուրդն արձանագրում է, որ Փաստաբանը ձեռնարկել հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը, դրանով իսկ բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:

Քննարկելով գործի ընթացքի մասին չտեղեկացնելու փաստաբանի վարքագիծը՝ խորհուրդն արձանագրում է, որ Դիմողի գործին վերաբերվող որոշ ծանուցումներ հասցեագրված են եղել Դիմողին, ինչպես նաև Փաստաբանի կողմից կատարվել են գործի հետ կապված անհրաժեշտ վճարումներ, մասնավորապես՝ տարբեր թույլտվություններ տրամադրելու վերաբերյալ պետական տուրքի վճարումներ, կամ պարտավորագրերով ստանձնած վճարումներ, որը կատարվել է Փաստաբանի կողմից Դիմողի անունից, և տվյալ պայմաններում անհասկանալի կլիներ, դիտարկել, որ Դիմողը տեղեկացված չի եղել անհրաժեշտ վճարումների մասին կամ Փաստաբանը ինքնակամ է, որոշել Դիմողի համար կատարել պարտավորագրերով ստանձնած վճարումները (ասվածը վերաբերվում է սույն որոշմամբ խորհրդի կողմից հաստատված փաստերի 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված վճարումներին):

Վերը նշվածի համատեքստում, գնահատելով նաև Խորհրդի նիստ ժամանակ Փաստաբանի բացատրությունները, առ այն, որ իր կողմից պարբերաբար գործի ընթացքի վերաբերյալ տեղեկացրել է Դիմողին, իսկ Դիմողը պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի նիստերին չի ներկայացել և չի ներկայացրել լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց, որը հնարավորություն կտար պարզելու և հաստատելու փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման փաստը:

Կարգի 7.2.6-րդ ենթակետի համաձայն՝ Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:

Օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նկատի ունենալով, որ Դիմողի կողմից նկարագրված հանգամանքները չեն հաստատվել, Խորհուրդը փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 2.7.2, 3.6.1 և 3.5.5 ենթակետերին հակասող, ուստի Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ և 39.8-րդ հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Մանուշակ Երվանդի Հակոբյանի (արտոնագիր թիվ՝ 737) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Գայանե Դեմիրչյան

23 օգոստոսի 2022թ.
թիվ ԿԳ/17-Ա
ք. Երևան